

յու չի թողնում. խիում, խփում, ջարդ ու խուրդ է անում, սատանի հոգին հանում:

Մէկ անգամ էլ աղամորդին ու սատանան պայման են կապում, որ իրար հետ «օրթըքդութիւն» (կիրարութիւն) անեն: Սոխ ու սխտոր են ցանում: Կանաչը դուրս գալուն պէս՝ մարդ հարցնում է սատանին. «Երեսինը կառնես թէ հողի տակինը»: Սատանան երեսինն է ուզում: Փամանակը դալիս հասնում է. սատանան իր փայլը քաղում, տանում լցնում է մի տեղ. մի երկու օրում փթեցնում, իսկ մարդն ուրախ-ուրախ հաւաքում է հողի տակի գլխները, տանում, ծախում, փող շինում:

Մէկէլ տարին սատանան նորից պայման է կապում աղամորդու հետ: Այս անգամ էլ ցորեն են ցանում: Առաջուան պէս՝ հէնց որ կանաչում է արտը, աղամորդին հարցնում է սատանին—որը պիտի առնէ. երեսինը, թէ հողի տակինը— «էօ ամեն ժամանակ չես կարող խաբել, ասում է սատանան, այս անգամ տակինը ես պիտի առնեմ»: Աղամորդին բոլ-բոլ ցորենը քաղում տանում է, իսկ սատանան փորում-փորփրում է հողը, տակը բան չի գտնում:

XI. Կ ա խ ա ր դ ու թ ի ն ք:

Համշէնցի ժողովուրդը ինչպէս որ անխախտ հաւատ ունի դէպի բնութեան չար զօրութեան գոյութիւնը, նոյնպէս էլ ընդունում է, որ չարը խափանելու համար կան յատուկ դեղեր ու միջոցներ, որոնց գաղտնիքն ու ազդեցութիւնը վերագրում է երբեմն չար, երբեմն էլ բարի զօրութեան, սատանի ու սրբերի կողմից մարդկանց տրուած շնորհքին: Կախարդութիւնը արհեստ շինած, միմիայն նրանով ապրող մարդիկ բոլորովին չկան նրանց մօտ: Չատ քիչ կը պատահին նրանց մէջ այնպիսիներ, որոնք երկրագործութեան հետ՝ երբեմն պարապ ժամերը այդ տեսակ բաներին նուիրէին: Այդ էլ շատ անգամ այնքան փողի համար չեն անում, ինչքան վարձքի կամ հէնց այնպէս հարուանութեան համար: Կախարդական բաների համար աւելի

մօտիկ մօլլաներին են դիմում: Արանք էլ են լսել «Հազարա-
կան» գրքի մասին. բայց ոչ տեսնող կալ, ոչ էլ ունեցող:

Գրանց մօտ են տանում գլխաւորապէս Հիւանդներին «գիր»
անել տալու համար զանազան ցաւերի դէմ. լուսնոտներին, դի-
ւահարներին ու վախածներին—չարից, «կոսիկից» ու վախից
աղատելու համար: Գրանց են դիմում ամուլները որդի բերելու
համար, կորուստ ունեցողները կորուստը գտնելու, երբեմն էլ
անձրևի գալն ու չը գալը իմանալու համար և այլն:

Կախարդներն ալ միջոցներն են գործ դնում «գիր» են
անում, «կաշտում» են անում, «թէ՛ղբալի»—համրելի վրայ
հատիկ քաշում, «հօմալիլ», «բաղմօտ», «նուակա» գրում, «թը-
լիսմ» անում, իսկ երբեմն էլ «տեսիլք» եղողները գուշակու-
թիւններ-մարգարէութիւններ անում:

«Գիր» են անել տալիս աւելի այն Հիւանդների համար,
որոնց համար կասկած կալ թէ՛ չարիցն է, վախից կամ «ակնը-
ւելուց»: «Գիր» են անել տալիս ոչ միայն մարդկանց, այլ և
Հիւանդ մալերի համար էլ: «Գիր» ասածը յայտնի ու ընդուն-
ուած որոշ խնդրուածքներ ու դիմումներ են, որոնց իմաստը
երբեմն վերացական ու այլաբանական ձևերով է արտայայտուում,
իսկ երբեմն էլ խօսքերից ոչինչ չի հասկացուում: Ամեն մի ցա-
ւի համար ջուկ «գիր» են անում. երբեմն նոյն իսկ մի տեսակ
ցաւի համար երկու-երեք տեսակ «գրեր» կան: «Գիրը» աւելի
մտքումն են ասում, կամ շրթունքներով կամայ փսփսում,
բայց այնպէս որ չը լսուի, հետն էլ մի աման ջուր, կրակ,
ասեղ կամ մի ուրիշ բան վերցնում, նայած ցաւի տեսակին:

«Գիրը» սովորաբար պառաւաններին ու գիւղի տիրացունե-
րին են անել տալիս, բայց դժուար բօպէներում ծանր Հիւանդ-
ների համար դիմում են աւելի մօլլաներին ու յայտնի մարդ-
կանց:

Երբ մէկը միւսին «գիր» է սովորեցնում, թէ՛ որ երկուսն
էլ մի սեռից են, մէջտեղը իրանց սեռիցը մի երեխայ են նըս-
տեցնում, որպէս զի սովորելուց յետոյ «գիրը» ուրիշ ժամանակ
էլ զօրութիւնը չը կորցնէ. իսկ երբ սովորողն ու սովորցնողը

մի սեռից չեն լինում, այսինքն՝ մեկը կին է, մեկը տղամարդ՝ մէջ տեղը երեխայ չի ուզիլ *):

Հիւանդի վրայ ամենից առաջ «կաշտում» են անում: Կարգացողը ինքը գիտէ, թէ ինչ պիտի կարգացուի: Ամեն կարգացածը օգուտ չի անիլ. որոշ գրքեր և որոշ տեղեր կան կարգալու: Աւետարան կարդում են Հիւանդի վրայ միայն տէրտէրները. բայց դրանից աւելի կտրուած են Նարեկն ու Կիպրիանոսը, որ գիւղի կախարդ-տեբացուներն են կարգում: Նարեկը թէ որ սալ քարի վրայ էլ կարգացուի, քարը կը հալի. այնքան խիստ է կտրում: Համարեա դրա չափ ոյժ ունի և Կիպրիանոս ասած գիրքը, որ սովորաբար ամեն տեսակ Հիւանդների գլխի տակն են դնում, փոքր, ծծկեր, լալկան ու չքնող մանուկներից սկսած: Գողը կտրելու համար յատկապէս Նարեկն են կարգում:

Երբ «կաշտումը» օգուտ չի անում, «Հօմայիլ» են շինում կտոր-կտոր թղթի վրայ բաներ են գրում, նեղ ու երկայն, Հիւանդի բօլի չափ իրար են կցում ու նրան տալիս, որ վրան պահի: Գրա նման մի տեսակ թուղթ էլ են գրում. նրան էլ «բազմօտ» են ասում:

Երբ սովորական «կաշտումը», «գիրն» ու «Հօմայիլները» օգուտ չեն անում, դիմում են իրանց յայտնի մօլլաներին: Մօլլան սատանին ըռնելու «գիրը» գիտէ. սատանի թագաւորութեան կնիքը մեծ մօլլի ձեռքին է. նրա զօրավարը մօլլան է: Մօլլան գալիս է Հիւանդի մօտ, նրա գլխին աղօթքներ ու «կաշտումներ» անում, «նուսկա» գրում և «թխումների» զօրութիւնով վերջապէս, եթէ չի մեռնում Հիւանդը, աջողում է դուրս հանել Հիւանդի փորից չար «ջիներին», և լաւացնել Հիւանդին:

«Թէ"գրէ» կամ համրիչ քաշում են աւելի եղանակն իմա-

*) Ժողովրդական «գրերից» այստեղ մենք ոչ մի հատ չենք բերում, քանի որ դրանք բոլորն էլ յօրինուած են ժողովրդական բարբառով, որ առանց բառարանի ու քերականական բացատրութեան դժուար կը լինի հասկանալ: Այդ թողնում ենք մեր մի ուրիշ ուսումնասիրութեան՝ «Համշէնցի հայերի բարբառին», որ մտադիր ենք լայս ընծայել ժողովրդական բանաւորականների նմուշների հետ միասին:

նալու համար: Թէև շատերը քաշում են, բայց դրան առհասարակ այնքան չեն հաւատում:

Երբեմն, թէև շատ հաղիւ, պատահում է, որ հիւանդ կանանցից մէկն ու մէկը «տեսիլք» է լինում. այն է՝ ուշքը գնում է, մի քանի օր անզգայ մնալուց լետոյ նորից ուշքի է դալիս և սկսում է պատմել այցելուներին, թէ ինչ շնորհքի է արժանացել ինքը Աստուծոյ, թէ ինչպէս ինքը գնացել, մաս է եկել միւս աշխարհը, թէ ում և ինչեր է տեսել այնտեղ, թէ ինչպէս նեղութեան մէջ է այնտեղ նրանց այս ինչ ազգականը, թէ ինչ է պակաս նրան և կամ թէ ինչ է հարկաւոր անել, որ ննջեցեալը հանգստանայ միւս կեանքում և այլն, կրցելով այդ պատմութիւններին մի շարք գուշակութիւններ ու մարգարէութիւններ այցելու դրացիների կեանքի ու ազդարարի մասին:

XII. ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒՅԻՆՆԵՐ.

Գուշակութիւններ: 1. Գործի դնալիս, թէ որ ճանապարհին կտցահարը «ճկճկայ», գործը գլուխ չի գալ:

2. Թէ որ կաշաղակը «ճղճղայ» ճանապարհի ձախ կողմը, գործը չի աջողուիլ, կամ թէ կորուստ մանդալիս՝ չի գտնուիլ. իսկ թէ աջ կողմը «ճղճղայ», վնաս չի տալ:

3. Աքաղաղը թէ որ ցերեկը շէմքին նայելով իրար վրայ երեք անգամ կանչէ, կամ հիւր կը դայ, կամ մի նոր լուր կառնեն:

4. Ականջը որ ծւայ, նոր լուր կառնեն:

5. Արուար որ տան վրայ կռկուայ, տան դրսի ազգականներից մէկը կը մեռնի:

6. Երբ ուզում են իմանալ թէ իրանց դրսի ազգականը գալու է թէ ոչ, բռնում են կատուի պոչից, թէ որ պոչը շարժէ հորիզոնական ձևով, չի գալ. իսկ թէ վերևից ներքև կը գայ:

7. Փէ՛լ-չաքալը» (չախկալի մի տեսակն է) ում արտի մէջ որ ոռնայ, նրա տիրոջ տնից մէկը կը մեռնի և կամ մի վնասի կը հանդիպի: Ասում են՝ որ ոռնացած տեղը «փէ՛լ-»